ՅԱՒԵԼՈՒԱԾՔ

Ա.

ՄԻԱԲԱՆՔ ԵՒ ԱՅՑԵԼՈՒՔ

Ա

ԱԲՐԱՀԱՄ ՎՐԴ. ԳԱՂԱՏԱՑԻ.— Մբ. 1631ին. Ս. Յակոբի վանքն ունի պատուական քարերով զարդարուած կիտուածաւոր սկիհ մը, որուն յիշատակարանն է հետեւեալը. «Ի վայելումն ս. սկիհս Գաղատացի Աբրահամ վարդապետին ի ՌՁ (=1631) Փրկչի թուին» (Ցուց. Պ.)։

ԱՂԱՒՆԻ (ԱՅՐԻ) ՃԷՎԱՀԻՐՃԵԱՆ ԵՒ ԴՈՒՍՏՐԸ ԲԵՐՈՒՋ ՃԷՎԱՀԻՐՃԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ.— 1913ին ուխտաւորութեամբ կ'այցելեն Ս. Յակոբի վանքը, Պոլիս վախճանած իրենց որդւոյն և եղբօրը Գաբրիէլ Ճէվահիրճեանի յիշատակին Ս. Յակոբի վանքին կը կտակեն հազար եգիպտ. ոսկւոյ գումար մը (Արձագր. Տն. Ժողովի, 1920, մարտ 27, նիստ ՃԻԸ)։ Աղաւնի 1926 մայիս 30ին կը վախճանի և մարմինը կ'ամփոփուի իր դստեր (1924) գերեզմանին մօտ։ Ասոնց կտակած գումարը յատկացուած է Ազգ. Նախակրթարանի վերաշինութեան ծախուց և յիշեալներուն համար յիշատակարան մը զետեղուած է այդ նոր շէնքի հիման մէջ, 1928 Ապրիլ 26ի օրը տեղի ունեցած հիմնարկութեան առթիւ։*

ԱՇՈՏ ՎՐԴ. ՍԱՐԳԻՍԵԱՆ.— (Տե՛ս էջ 24) կը վախճանի 27 յուլիս 1929ին, Երուսաղէմի մէջ։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՊԵ. ՄԵՐՏԻՆՑԻ.— (Տե՛ս էջ 32). իր պտրք. ընտրութեան մասին՝ տեսնել Յովհաննէս կրդ. Թլկուրանցի, էջ 361—362)։

ԱՏՈՎՄ ԱԲ. ՄՈԿԱՑԻ.— Ժե. դարու սկիզբը Երնջակի Ապրակունեաց վանքին աբեղաներէն մին, որ Քաղկեդոնական դարձաւ, բայց զղջալով՝ ապաշխարութեան համար Երուսաղէմ